ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԴՈՒՐՍ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՄԱՐ

ՀԱՅ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՊԱՆԴՈՒԽՏ ՕԶԱԽԻՆ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ 250ԱՄԵԱԿԻՆ

Գրեց Յ. ՇԻՐԱԶ

Օտար ջրերում հայացեալ կղզի,
Հայոց հին լոյսն է քեզնով նորանում,
Բայց ներիր թէ իմ զարմանքը խօսի՝
Ի՞նչպէս ես առանց մայր Արաքս մնում
Թէկուզ հեռում էլ դու լոյս ես ծնում:

Ո՞վ Սուրբ Ղազարի հայախօս կղզի,
Մխիթարում է կեանքդ Մաշտոցով,
Բայց ջրերում էլ, դեռ օտար յոյսի,
Ի՞նչպէս ես ծաղկում առանց Վանայ-ծով,
Դիւցազն ես, իրաւ, մտքիդ երկնածով...

Ի՞նչպէս ես լուսուել առանց Սեւանի,
Առանց Աղթամար՝ ո՞նց ես զօրանջում,
Ո՞նց ես կամարուել դու առանց Անի,
Առանց հայրենիք՝ ի՞նչպէս չես փլչում,
Ուր օտար կոչն է հայ լեզուն ջնջում...

Գիտեմ՝ տխնում ես՝ այս էլ դարէց-դար՝
Հայրենիքից դուրս՝ հայրենեաց համար,
Ո՞վ Սուրբ Ղազարի հայաջահ կղզի,
Բայց ո՞նց ես ջահուել, առանց Երեւան,
Ի՞նչպէս չես մեռնում՝ առանց Մասիսի,
Առանց հող՝ ո՞նց էք վահանուել, Վահան:

Ո՞վ Սուրբ Ղազարի Միաբանութիւն,
Դու սրտի հերոս, մտքի դիւցազուն,
Ներս ու դրսից էլ Աստծուն ես հագած,
Բայց ո՞նց ես մնում առանց Արագած՝
Հեռուից կ'երեւա՞յ իր կանթեղը քեզ,
Որ օտար մթնում խոր չխարխափես...

Ես քո վշտից էլ գլուխ չեմ հանում՝
Ի՞նչպէս ես՝ առանց Մասիս դիմանում,
Երբ ես՝ նայելով բանտուած Մասիսին՝
Ինքս էլ վանդակուած մի հաւք եմ թուում,
Ուզում եմ ճչալ, մանուկ Ցիսուսին՝
Թէ աշխարհն ինչո՞ւ մեղքը չի քաւում:

Օտար ջրերում խարխսխ ես ձգել...
Մինչ հայ է տեսնում ծովն էլ մեր Վանայ,
Սո՞ւրբ Ղազար, մի՞թէ չես կարող փրկել
Գէթ Վանայ ծովդ, յոյսով Սեւանայ,
Գէթ Արարատս՝ ճանկերից վայոց,
Որ մխիթարուի նոր կեանքս էլ Հայոց...

1968, Երեւան

ՀՈԳԻՆԵՐՈՒ ՀԱՆԳՐՈՒԱՆ

Գրեց Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Ի հայրենեաց նիզդեհք յօժարք, յանխուլ կղզիս,
Ի սպաս Փրկչին, մօրըն Կուսին եւ Հայ ազգիս,
Ուր միաբան վաստակեցին, հանգչին եւ անդ,
Հարք և եղբարք Մխիթարեանք յոյս անվրկանդ,
Յարփիանալ մահահալած կենացն աւուր,
Նորադիտակք զուգապարել լուսափետուր:

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ (1873)

Ա.

Այս է ճամբան յաւերժական օրերուն,
Որ ետ երբեք չի դառնար,
Ուր կը տիրէ խորհրդաւոր Լռութիւնն,
Անսահմանին հաւասար:
Եւ դուռն անոր հաւատքը լոկ կը բանայ,
Աւետարանը ձեռքին.
Յոյսին հետ քոյր՝ մխիթարանքը կու գայ
Տալու ժըպիտ մը սուգին:
Խաչեր պըղինձ, խաչեր երկաթ ու մարմար
Դէպի անհուն կ'երկարին,
Ուր կանգ առաւ արեգակին հետ աշխարհ,
Անծանօթի փակ սեմին:
Ուր նոճիներ, իմաստութեան զերդ կոյսեր,
Վառած չողերն արեւուն,
Կ'առաւօտեն որ գայ փեսան կենսաբեր
Յիսուսական օրերուն:
Կապոյտ շուքեր եւ վարդարոյր ծիրանի
Թափանցկօրէն կ'ամպանան.
Բաղեղն անխօս, քոյր տրամութեան սիրելի,
Կը գրկէ սիրտ ու դամբան:

© National Library of Armenia